Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 13 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայփոստ»-ի միջոցով իրականացվող «Հեռուստամարաթոն - 2011»-ի նվիրատվությունների հավաքագրում» ծրագիր.

«Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ ավագ դպրոց» ծրագիրը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բնակելի տան պատուհանների և դռների տեղադրում»,«Դպրոցի դասասենյակի վերանորոգում» և «Բնակելի տան վերանորոգում» ծրագրերը.

«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը.

Ամերիկայի հայ օգնության ֆոնդի հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ», «Հայաստանի ծնողազուրկ երեխաների օգնություն», «Կրթավճարներ» , «Բարեգործական ճաշարաններ» ծրագրերը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք» և «Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագած համայնքի մանկապարտեզի տանիքի վերանորոգման համար» ծրագրերը.

«Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012-2014 թվականներին իրականացվող բարեգործական ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: